

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ  
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՌԵԿՏՈՐ,  
ՊՐՈՖԵՍՈՐ ~~ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՌԵԿՏՈՐ~~ ԳՎԿԻԹ ԽԻԹԱՐՅԱՆ

09 հունիսի 2022թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

**Մերի Հրաչի Շաբոյանի «Լոգոպեդական աշխատանքի օպտիմալացման ուղիները կոկորդի հեռացումից հետո» թեմայով ԺԳ.00.03- «Հարուկ մանկավարժություն» (Լոգոպեդիա) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման արեւնախոսության վերաբերյալ**

Մ. Շաբոյանը հիմնվելով բազմաթիվ ուսումնասիրությունների վրա (Կոժանով, Լ.Գ, Սոկոլով, Վ. Վ., Սդվիժկով. Ա., Մ, Ելիսենկով, Գ.Վ, 2011, Պալչուն, Վ. Տ, Մագոմեդով, Մ. Մ, Լուչիխին, Լ. Ա, 2011, Հովհաննիսյան Մ., 2015 և այլք) փաստում է, որ ինչպես աշխարհի տարբեր երկրներում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում, քաղցկեղի տարբեր տեսակներով հիվանդների թվի սրընթաց աճ է գրանցվում, ուստի այս անձանց հետ իրականացվող բժշկական, հոգեբանական և մանկավարժական-վերականգնողական աշխատանքների համատեքստում բարեփոխումների իրականացումը կարևորագույն տեղ է գրավում պետական ռազմավարության շրջանակներում:

Տվյալ խնդրով անձանց հետ իրականացվող բժշկահոգեբանամանկավարժական աշխատանքների կատարելագործումը ենթադրում է աշխատանքի առավել օպտիմալ ուղիների որոնում, որի հիմնախնդիրներից մեկն էլ կոկորդը հեռացրած անձանց հետ իրականացվող լոգոպեդական աշխատանքի իրականացումն է՝ միտված կոկորդի հեռացումից հետո ձայնի ձևավորմանը:

Չարորակ նորագոյացության առկայության դեպքում կոկորդի հեռացումը անձին զրկում է ձայնից և հետևապես բանավոր խոսքով հաղորդակցվելու կարողությունից: Արդյունքում կոկորդը հեռացրած անձիք ունենում են հոգեբանական, սոցիալական լուրջ խնդիրներ. խիստ սահմանափակվում է շփումների շրջանակը, զրկվում կամ ինքնական հրաժարվում են աշխատանքից, փոխվում է հասարակության մեջ անձի դերը, դիտվում է

վախ ապագայի նկատմամբ, անորոշություն, հուսահատություն և այլն (Մ. Ս. Պոպովա, 1979, Վ. Ն. Գերասիմենկո, Ե. Վ. Դորոգովա, Յու. Վ. Արտյուշենկո, Ա. Շ. Տխոստով, 1981, Լ. Ն. Բալացկայա, Ե. Ա. Կրասավինա, 2015, Դ. Յու. Վելտիշչև, Ա. Ե. Զելտին, Օ. Ֆ. Սերավինա, Ս. Գ. Ռոմանենկո, 2015, Մ. Հ. Շաբոյան, 2018, 2021 և այլք): Միանշանակ, այն իր բացասական ազդեցությունն է ունենում այս անձանց կենսագործունեության բոլոր ոլորտների վրա: Այս համատեքստում մեր կողմից գրախոսվող աշխատանքը խիստ արդիական է, ունի կարևոր տեսական, գործնական և սոցիալական նշանակություն: Մ. Շաբոյանը կատարելով գիտատեսական բազմաձևավալ և ընդգրկուն ուսումնասիրություն, արդարացիորեն նշում է, որ մասնագիտական գիտամեթոդական գրականության մեջ կան տարբեր մոտեցումներ կոկորդը հեռացրած անձանց հետ իրականացվող լոգոպեդական աշխատանքի վերաբերյալ, սակայն Հայաստանի Հանրապետությունում բացակայում են խնդրո առարկային նվիրված գիտական ուսումնասիրությունները, վերլուծված չէ լոգոպեդական աշխատանքի դրվածքը խնդրո առարկայի շուրջ, բացահայտված չեն առկա խնդիրները, իրականացվող լոգոպեդական աշխատանքում հաշվառված չեն ազգային, սոցիալ-մշակութային առանձնահատկությունները: Վերը նշվածը վկայում է ատենախոսի կողմից ներկայացված հետազոտության հրատապության և կարևորության մասին: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածից և փորձարարության արդյունքների ներդրման ակտերից: Ատենախոսության բնագիրը պարունակում է 16 աղյուսակ, 8 տրամագիր, 4 նկար, 9 հավելված: Ատենախոսությունը շարադրված է համակարգչային շարվածքով՝ 129 էջով:

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված է հիմնախնդրի մշակվածության աստիճանը, հետազոտության վարկածը, որը ատենախոսին թույլ է տվել հստակորեն սահմանել հետազոտության նպատակը, խնդիրները, ձևակերպել պաշտպանությանը ներկայացվող դրույթները, ընտրել հետազոտության անհրաժեշտ մեթոդներ և հիմնվել մեթոդոլոգիական համապատասխան հիմքերի վրա: Հեղինակը կատարել է լայնաձևավալ աշխատանք, տեսական նյութը ամրապնդել է գործնական կիրառությամբ, որի արդյունքները, ինչպես երևում է աշխատանքից և բազմաթիվ տրամագրերից և աղյուսակներից, ավելին, քան գոհացուցիչ են: Առաջին անգամ գիտականորեն վերլուծվել է կոկորդը հեռացրած անձանց հետ իրականացվող լոգոպեդական աշխատանքի դրվածքը Հայաստանի Հանրապետությունում, բացահայտվել են

լոգոպեդական աշխատանքում առկա խնդիրները, մշակվել և գործնականում ներդրվել են լոգոպեդական աշխատանքի օպտիմալ մոդել և աշխատանքի օպտիմալացման ուղիներ, ներդրվել է ընտանիքի անդամի՝ «պարտնյորի» պարտադիր մասնակցությունը լոգոպեդական աշխատանքում, մշակվել են լոգոպեդական աշխատանքի օպտիմալ մոտեցումներ, առաջադրանքներ՝ հաշվի առնելով ազգային, սոցիալ-մշակութային և մայրենի լեզվի առանձնահատկությունները, ինչպես նաև մշակվել են կոկորդը հեռացրած անձանց ընտանիքներին ցուցաբերվող մանկավարժական-մեթոդական աջակցության մոտեցումներ: Վերը նշվածը ակնառու կերպով փաստում է ատենախոսի կողմից իրականացված գիտահետազոտական աշխատանքի գիտական նորույթը: Կարևորում ենք հատկապես շեշտադրել հավելվածի օգտակար գործողության գործակիցը, հատկապես՝ մայրենի լեզվով, ինչը մեծապես բարձրացնում է ատենախոսության գործնական կիրառելիության մակարդակը:

Ատենախոսության առաջին՝ «Հիմնահարցի դրվածքը» խորագրով գլուխը կազմված է չորս ենթագլխից, որտեղ ատենախոսը հանգամանորեն ներկայացնում է հոգեբանության, բժշկության, լոգոպեդիայի բնագավառում խնդրո առարկայի շուրջ ուսումնասիրությունների արդյունքները, կոկորդը հեռացրած անձանց խոսքային, հաղորդակցային, հոգեբանական և ֆիզիկական խնդիրները, դրանց առաջացման պատճառները, ախտահարման մեխանիզմը, ուսումնասիրման ֆիզիոլոգիական, կլինիկական, հոգելեզվաբանական և հոգեբանամանկավարժական տեսանկյունները:

Կոկորդը հեռացրած անձանց հետ իրականացվող լոգոպեդական աշխատանքի օպտիմալացման հիմնախնդիրը Մ. Շաբոյանը ներկայացնում է՝ որպես արդի լոգոպեդիայի հատուկ հետազոտությունների առարկա և ցույց է տալիս իր գիտական տեսակետը, հիմնավորելով, որ կոկորդի հեռացումից հետո տվյալ անձիք ունենում են մի շարք խնդիրներ, որոնց արդյունքում տուժում են կյանքի տարբեր ոլորտներ՝ ընտանեկան, աշխատանքային, հասարակական, մասնագիտական և այլն:

Մասնագիտական, գիտամեթոդական գրականության բազմակողմանի և ծավալուն վերլուծության արդյունքում, հեղինակը հանգում է այն եզրահանգման, որ կոկորդը հեռացրած անձանց ձայնի ձևավորմանն ուղղված լոգոպեդական աշխատանքի որոշ ուսումնասիրություններ և մոտեցումներ առկա են (Ս. Լ. Տապտապովա, 1984, Ե. Ս. Ալմազովա, 1973 և այլք), սակայն տվյալ ուսումնասիրությունները խիստ սակավաթիվ են,

բացի այդ, դրանցում հաշվի չեն առնված ազգային, հոգեբանական և սոցիալ-մշակութային առանձնահատկությունները:

Այսպիսով, Մ. Շաբոյանին հաջողվել է լիարժեք ներկայացնել հիմնախնդրի դրվածքը և համապատասխան եզրահանգումներ կատարել, որոնք հիմք են հանդիսացել փորձարարական հետազոտության համար:

Ատենախոսության երկրորդ՝ «Կոկորդը հեռացրած անձանց լոգոպեդական հետազոտումը» խորագրով գլուխը կազմված է երեք ենթագլխից: Այն ներառել է խնդրո առարկայի շուրջ սոցիոլոգիական հետազոտություն, որին մասնակցել են 83 լոգոպեդ, 55 բժիշկ և կոկորդը հեռացրած անձանց ընտանիքների 61 անդամներ: Հեղինակը գրագետ և հիմնավոր վերլուծության է ենթարկել ստացված արդյունքները:

Ատենախոսին հաջողվել է գիտական լուրջ հիմնավորմամբ բացահայտել ձայնի բացակայության պայմաններում կոկորդը հեռացրած անձանց հաղորդակցման առանձնահատկությունները: Հետազոտության արդյունքների վերլուծությունը վկայում է, որ հեղինակը պատշաճ գիտական մակարդակով մեկնաբանել է այս անձանց բնորոշ հաղորդակցման դժվարությունները, ձայնի ձևավորման համար անհրաժեշտ նախադրյալների, այն է՝ խոսքային շնչառության խնդիրները և համաժամանակյա արտաբերական շարժումներ կատարելու կարողության առանձնահատկությունները: Միևնույն ժամանակ ատենախոսը արձարանագրել է նաև, որ այս անձանց բնորոշ են հուզականային ոլորտի ինքնատիպ դրսևորումներ ևս, որոնք էլ իրենց հերթին կրկին բացասական են անդրադառնում լոգոպեդական աշխատանքի կազմակերպմանը: Վերլուծելով լոգոպեդական աշխատանքի դրվածքը՝ ատենախոսը փաստել է, որ բացակայում է այս անձանց ցուցաբերվող բժշկահոգեբանամանկավարժական աջակցության համակարգը, ինչը հնարավորություն չի տալիս արդյունավետ ձևով կիազմակերպել կոկորդի հեռացումից հետո բուժական, ինչպես նաև հոգեբանամանկավարժական աշխատանքները: Ատենախոսն արդարացիորեն և պատշաճ մակարդակով հիմնավորում է, որ անհրաժեշտ է մշակել լոգոպեդական աշխատանքի օպտիմալ ուղիներ՝ նպատակաուղղված թիրախային խմբի անձանց ձայնի ձևավորմանը:

Ատենախոսության երրորդ՝ «Հետվիրահատական շրջանում կոկորդը հեռացրած անձանց ձայնի ձևավորման լոգոպեդական աշխատանքի օպտիմալացման ուղիները» գլուխը կազմված է երեք ենթագլխից: Ատենախոսին հաջողվել է գիտականորեն, համոզիչ փաստարկներով, օրինակներով, բացահայտել կոկորդը հեռացրած անձանց հետ իրա-

կանացվող լոգոպեդական աշխատանքի օպտիմալացման ուղիները, մոտեցումները, ինչպես նաև ներդրված մոտեցումների դրական ներգործությունը այդ գործընթացում: Ուշագրավ է Մ. Շաբոյանի կողմից մշակված կոկորդը հեռացրած անձանց ձայնի ձևավորման օպտիմալ մոդելը և կոկորդի չարորակ նորագոյացություն ունեցող անձանց ցուցաբերվող հոգեբանամանկավարժական աջակցության օրինակելի համակարգը:

Մ. Շաբոյանը փորձարարական ուսուցման ճանապարհով հաստատել է, որ իր կողմից մշակված օպտիմալացման ուղիները բացարձակ դրական արդյունք են գրանցել կոկորդը հեռացրած անձանց ձայնի ձևավորման գործընթացում:

Ատենախոսի կողմից իրականացված փորձարարական հետազոտությունների արդյունքները ապացուցեցին առաջադիր վարկածի հավաստիությունը, աշխատանքն ավարտվում է եզրակացություններով, որոնք համոզիչ են՝ ատենախոսությունը գործնականում կիրառելի դարձնելու համար:

Ամփոփելով Մ. Հ. Շաբոյանի ատենախոսական աշխատանքի վերլուծությունը՝ կարող ենք ասել, որ ատենախոսը ցուցաբերել է ինքնուրույն ունակություն՝ մշակելու և հաջողությամբ լուծելու կարևոր և հրատապ գիտական խնդիրներ, գրագետ և գիտականորեն մեկնաբանելու ստացված արդյունքներ: Սույն հետազոտությունը լուծել է լոգոպեդական բնագավառում այնպիսի կարևորագույն խնդիր, ինչպիսին է, կոկորդը հեռացրած անձանց ձայնի ձևավորումը, դրանով իսկ նպաստելով տվյալ անձանց սոցիալական հարմարմանը, կյանքի լիարժեք ուղի վերականգնմանը:

Ատենախոսական աշխատանքը գրված է գրագետ, գիտական լեզվով, խոր և համակողմանի վերլուծությամբ:

Արժևորելով ատենախոսի կողմից կատարված լայնածավալ աշխատանքը, նրա գիտական արժեքն ու կարևորությունը, անհրաժեշտ ենք համարում նշելու առանձնակի բացթողումներ և առաջարկություններ.

1. Ատենախոսության 1.1 ենթագլխում ցանկալի կլիներ առավել հանգամանորեն անդրադարձ կատարվել հիմնախնդրի հոգեբանական տեսանկյան վերլուծությանը:
2. Ատենախոսության 3.1 ենթագլխում, ատենախոսի կողմից վերականգնողական գործընթացում արժևորված մասնագետների փոխհամագործակցության ձևաչափում ցանկալի կլիներ ներառվել նաև ֆիզիկական թերապիստ:

3. Արդյունավետ կլինեն, որ աշխատանքում բացի խնդրի հաղթահարման ավանդական մեթոդներից ներկայացված լինեին նաև նորարարական տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները:
4. Հեղինակի կողմից իրականացված ծավալուն հետազոտության արդյունքում ցանկալի կլինեն, որ եզրակացության մեջ արտացոլվեին որոշակի տոկոսային ցուցանիշներ, որոնք առավել տեսնելի կդարձնեին մանկավարժական գիտափորձի տվյալները:

Սակայն վերոհիշյալ դիտարկումները ամենևին չեն ստվերում Մ. Շաբոյանի «Լոգոպեդական աշխատանքի օպտիմալացման ուղիները կոկորդի հեռացումից հետո» խորագրով թեկնածուական ատենախոսության գիտագործնական նշանակությունը: Այն կուռ կառուցվածքով, հաջողված, ավարտուն, ինքնուրույն աշխատանք է, որն էլ առանձնանում է հիմնավորված արդիականությամբ, նորույթով, տեսական և գործնական, ուղղվածությամբ:

Ատենախոսության սեղմագիրը և գիտական հրապարակումները վկայում են ատենախոսության հիմնական դրույթները, իսկ ուսումնասիրությունների հետևությունները լրացնում են լոգոպեդական արդի առաջավոր փորձը գիտահետազոտական նոր հիմնավորված արդյունքներով:

Մ. Հ. Շաբոյանի կողմից ներկայացված ատենախոսական աշխատանքը քննարկվել է Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի ֆիզիկական դաստիարակության տեսության, մեթոդիկայի և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի 07.06.2022թ-ի թիվ 10 ամբիոնի նիստում, որին մասնակցում էին՝ դոկտոր, պրոֆեսորներ՝ Ֆ.Գ. Ղազարյանը, Ե.Ս. Հակոբյանը, մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր՝ Ս.Հ. Հովեյանը, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Ա.Գ. Ստեփանյանը, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Թ.ՅՈւ Ազատյանը, Ա.Հ. Պատվականյանը, Ա.Վ. Պողոսյանը, Ա.Ռ. Պապիկյանը, Թ.Լ. Մկրտչյանը, Ա.Հ. Շախյանը, ամբիոնի դոցենտներ՝ Յու.Գ. Գրիգորյանը, Ե.Ն. Նահապետյանը, ասիստենտներ Գ.Պապանյանը, Ս.Գ. Խաչատրյանը, դասախոսներ Ս. Զեյրանյանը, Ա.Կովոլյովան, ավագ լաբորանտ՝ Ն.Նուշիկյանը:

Քննարկման արդյունքում՝

կողմ՝ 16

դեմ՝ չկա

ձեռնպահ՝ չկա

անցավ միաձայն:

**ԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Մերի Հրաչի Շաբոյանի՝ «Լոգոպեդական աշխատանքի օպտիմալացման ուղիները կոկորդի հեռացումից հետո» թեմայով ատենախոսությունը հայերեն լեզվով գրված միակ աշխատանքն է՝ հարուստ մեթոդական ցուցումներով և հանձնարարականներով, ինչն առանձնապես ընդգծում է լոգոպեդական աշխատանքի արդյունավետությունը, համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և իր ԺԳ.00.03 «Հատուկ մանկավարժություն» (Լոգոպեդիա) մասնագիտական թվանիշին, իսկ ատենախոսը լիովին արժանի է մանկավարժական գիտությունների գիտական աստիճանի շնորհմանը:

**ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝**

**ՀՖԿՍՊԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ,**

**ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԵՎ ԱԴԱՊՏԻՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ**

**ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ, ՄԳԹ, ԴՈՑԵՆՏ՝**

**Ա. Գ. ՍՏԵՓԱՆՅԱՆ**

**ՀՖԿՍՊԻ ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

**ՄԳԴ, ՊՐՈՖԵՍՈՐ՝**



**Ա. Ա. ՉԱՏԻՆՅԱՆ**

**09 հունիսի 2022թ**